ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱ-ՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Հովիկ Գրիգորյան

ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ)

Հիմնաբառեր. ՀՅԴ Ցուցական մարմին, Դաշնակցության Խորհուրդ, «Նժույգի գործ», ուրբաթօրյա սելամլըք, ձեռնառումբ, կառք-ռումբ, մելինիտ, Ցուցական մարմնի տեղեկագիր, Եղեռնական ատյան:

Հոդվածում համակողմանիորեն վերլուծվում է Վիտոշի աղետին հաջորդած ամիսներին (1905 թ. մարտ – հուլիսի կեսեր) ՀՅԴ Կ. Պոլսի Ցուցական մարմնի ծավալած գործունեությունը, որը նպատակաուղղված էր ավարտին հասցնելու սուլթան Աբդուլ Համիդ II-ին պատուհասելու ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները («Նժույգի գործ»-ը): Բավմապան աղբյուրների, այդ թվում՝ վերջին տասնամյակներին առաջին անգամ հրապարակված ՀՅԴ Բոստոնի կենտրոնական արխիվի փաստաթղթերի հենքի վրա ներկայացվում են ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու Ցուցական մարմնի գործունեության մի շարք դրվագներ, որոնք նախկինում գրեթե դուրս էին մնացել պատմաբանների տեսադաշտից: Համադրելով և վերլուծելով շատ դեպքերում միմյանց հակասող կամ փոխբացառող փաստական նյութը՝ հոդվածում սպառիչ պատասխաններ են տրվում ցայսօր վիճահարույց մի շարք հարցերի: Մասնավորապես, ներկայացվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ այն հանգամանքները, որոնք Ցուցական մարմնին ստիպեցին իր ղեկավար Քրիստափոր Միքայելյանի նահատակվելուց հետո հրաժարվել նախնական ծրագրից և «Նժույգի գործ»-ի նախապատրաստման վերջին փուլում ընտրել վճռական հարված հասցնելու նոր գործելակերպ: Հոդվածում նաև կարևոր ճշգրտումներ են կատարվում ՀՅԴ Ցուցական մարմնի գործունեության և «Նժույգի գործ»-ի՝ պատմաբանների համար վիճահարույց ու հակասական որոշ հարցերի վերաբերյալ:

Մեր նախորդ հոդվածներից մեկում արձանագրել էինք, որ XX դարասկզբի հայոց ազատամարտի կարևոր դրվագներից մեկի՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի պատուհասման վերաբերյալ տպագիր վավերագրերի, հուշագրությունների, տարաբնույթ հրապարակումների և գիտական ուսումնասիրությունների մեծ քանակության առկայությունն ամենևին չի նշանակում, թե այդ հարցում պատմաբանն այլևս անելիք չունի: Ընդհակառակը՝ ժամանակին հնչեղություն ստացած այդ իրադարձությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ հնչեցված կարծիքների և գնահատականների խայտաբղետությունն ու հակասականությունը վկայում են, որ այս հարցում պատմաբանի համար վաղաժամ է վերջակետ դնելը:

Հիմնահարցին նվիրված մեր նախորդ հրապարակումներում հանգամանորեն անդրադարձել ենք ՀՅԴ Ցուցական մարմնի ձևավորման հանգամանքներին, Աթենքում և Պիրեայում գումարված ժողովներում ընդունված առանցքային որոշումներին, այդ թվում՝ Ցուցական մարմնի «Փորձնական կանոնագրի» մշակմանը, Ցուցականի անդամների և օժանդակ գործիչների Կ. Պոլիս անցնելուն, մինչև Վիտոշի աղետը ներառող մոտ վեցամսյա ժամանակահատվածում Ցուցական մարմնի ծավալած գործունեությանը, «Նժույգի գործ»-ի իրականացման և այլ հարցերում նրա անդամների շրջանում առկա տարակարծություններին, ձեռնարկի որոշակիացման հարցում կատարված հստակեցումներին, Ք. Միքայելյանի՝ Կ. Պոլսից Բուլղարիա անցնելու հանգամանքներին, Վիտոշի աղետին առնչվող հարցերին և այլն[1]:

* Հոդվածը ներկայացվել է 05.07.2021 թ., գրախոսվել՝ 15.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Մանրամասն տե՛ս Գրիգորյան Հ., ՀՅԴ Ցուցական պատասխանատու մարմնի ստեղծումը և գործունեությունը մինչ Կ. Պոլիս անցնելը, // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2016, էջ 33-46: Նույնի՝ ՀՅԴ Ցուցական մարմնի գործունեությունը «Նժույգի գործ»-ի նախապատրաստման առաջին փուլում (1904 թ. սեպտեմբեր – 1905 թ. մարտ), // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2019, N 2, էջ 77-94:*

Սույն հոդվածով խնդիր ենք դրել հետազոտելու Վիտոշի աղետին հաջորդած ամիսներին Մեծ մարդասպանին պատուհասելու նպատակով նախապատրաստվող ձեռնարկի իրագործման հարցում Ցուցական մարմնի առջև ծառացած նոր խնդիրները, բացահայտելու օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի այն հանգամանքները, որոնք պայմանավորեցին «Նժույգի գործ»-ում տեղի ունեցած էական շրջադարձը, ցույց տալու այդ հարցում Ցուցական մարմնի համար լուրջ այլընտրանքի բացակայությունը: Նաև նպատակ ենք դրել՝ հենվելով ՀՅԴ Բոստոնի կենտրոնական արխիվի կողմից վերջին շրջանում հիմնահարցի վերաբերյալ շրջանառության մեջ դրված վավերագրերի ստույգ տեղեկատվության վրա՝ հերքելու թուրքական պաշտոնական հրապարակումներում «Նժույգի գործ»-ի վերաբերյալ առկա մի շարք էական սխալներ և կատարելու կարևոր ճշգրտումներ ու հստակեցումներ:

Վիտոշի 1905 թ. մարտի 4 (17)-ի աղետը, որի հետևանքով նահատակվում են Ցուցական մարմնի անդամներ Քրիստափոր Միքայելյանն ու Վռամշապուհ Քենդիրյանը, աննկատ չի մնում և բարդ կացության առջև է կանգնեցնում բուլղարական իշխանություններին: Ոստիկանությունը մի քանի օր թույլ չի տալիս հողին հանձնել զոհվածների աճյունները և փորձում է բացահայտել ակնհայտորեն քաղաքական երանգ ունեցող դեպքի իրական հանգամանքները: Աղետին հաջորդած օրերին Սոֆիայից ռուսական հեռագրական գործակալության ստացած հեռագրերը թեև ի սկզբանե արձանագրում էին հայկական հետքը, բայց ճշմարտությունն անմիջապես և ամբողջովին չէ, որ բացահայտվում է: «Երկու կասկածելի հայեր, - ասվում էր մարտի 12-ի հեռագրում, - որ առաջ ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ աքսորված էին Վարնայից, գաղտնի վերադարձել էին Սօֆիա: Որպէսզի խուսափեն ոստիկանական հսկողութիւնից, որ աւելի խիստ է մայրաքաղաքում, նրանք բնակվում էին Կնեաժեվո գիւղում, Սօֆիայից 8 կիլօմետր հեռու: Անցեալ շաբաթում նրանք երկուսն էլ սպանվեցին Վիտօշ լեռան վրա ուժանակով, որով փորձեր էին անում: Սպանվածների ով լինելն ստուգելու, նրանց ծրագիրները և համախոհներն իմանալու համար իշխանութիւնը գաղտնի քննութիւն կատարեց, թոյլ չտալով թաղել նրանց. Թաղելու թոյլ տուին միայն երէկ: Դատական իշխանութիւնը շարունակում է քննութիւնը: Աջողվեց պարզել, որ սպանվածները պատկանում էին հայ յեղափոխական «Դրօշակ» ընկերութեանը»[1]:

Վերը շարադրվածից ակնհայտ է, որ սկզբնապես ոստիկանությունը գնացել է կեղծ հետքով: Քրիստափորն իր փորձարկումները կատարել էր Ֆիլիպեում (Պլովդիվ), իսկ Վ. Քենդիրյանը նոր էր դուրս եկել Կ. Պոլսից: Հետևաբար, նրանք չէին կարող արտաքսվել Վառնայից: Բուլղարական ոստիկանությունը, չկարողանալով պարզել զոհվածների ինքնությունը, ըստ երևույթին, հակված էր ենթադրել, որ նրանք կարող էին լինել ամիսներ առաջ Վառնայում ձերբակալված, ապա աքսորված Կարոն, Լևոնը կամ Սարգիսը: Բայց արդեն մարտի 13-ին Սոֆիայից ստացված հերթական հեռագիրը, իրոք, կարող էր անհանգստանալու տեղիք տալ Ցուցական մարմնին. «Պարզված է, - ասվում էր դրանում, - որ Վիտոշ լեռան վրա դինամիտի պայթիւնից սպանված երկու հայեր, ապրում էին Սօֆիայում «Բոլգարիա» հիւրանոցում: Մէկը անուանել էր իրան *Բէլգիահպատակ, տալով Ժորիս հնարովի ազգանունը* (ընդգծումը մերն է – Հ.Գ.): Սպանվածների մօտ, ոչ էլ նրանց իրերի մէջ չէ գտնուած ոչ մի դօկումենտ: Այդ բանը շատ է դժուարացնում գործի քննութիւնը»[2]: Ճիշտ է, հետագա օրերին, հասկանալի պատճառներով, բուլղարական իշխանությունների համար հարցն աստիճանաբար կորցնում է հնչեղությունը, բայց Է. Ժորիսի անվան հրապարակումը կարող էր հրավիրել թուրք դիվանագետների ու լրտեսների ուշադրությունը և վերջիններիս նպատակասլաց պրպտումների դեպքում վտանգել ոչ միայն իրեն՝ Է. Ժորիսին, այլև «Նժույգի գործ»-ն ընդհանրապես:

Ք. Միքայելյանի նահատակությունն անսպասելի և ծանր հարված էր Դաշնակցության համար: Չլինելով բեղուն գրչի տեր հրապարակախոս և ոչ էլ փայլուն հռետոր՝ Քրիստափորը, այնուհանդերձ, տակտի զգացողության, երկաթյա կամքի, կազմակերպական

[1] *«Մշակ», 13 մարտի 1905, N 44:*

[2] *Նույն տեղում, 15 մարտի 1905, N 45:*

անուրանալի ընդունակությունների, պարզ կենցաղի, բարոյական անաղարտության և ընդգծված գաղափարականության շնորհիվ անփոխարինելի ուժ էր ՀՅԴ ղեկավարության մեջ: Բնական է, որ այդ օրերին գումարված Դաշնակցության Խորհուրդը, ստանալով աղետի լուրը, ընդհատում է իր աշխատանքը: Նրա մասնակիցները շտապում են Սոֆիա՝ հարգանքի և հրաժեշտի վերջին տուրքը մատուցելու իրենց զինակիցներին և կուսակցության անառարկելի առաջնորդին:

1905 թ. մարտի 10 (23)-ին Բուլղարիայի մայրաքաղաքն ականատես է դառնում զույգ նահատակների հիշատակին կազմակերպված աննախադեպ սգո հանդեսին, որին մասնակցում էին հազարավոր հայեր, մակեդոնացիներ ու բուլղարներ, այդ թվում՝ բուլղար-մակեդոնական շարժման անվանի առաջնորդներ[1]: ՀՅԴ առաջնորդին նվիրված ձոն էր «Դրոշակ»-ում տպագրված մահախոսականը, թեև հասկանալի պատճառներով անորոշ, տարտամ և եզեպոսյան լեզվով էին ներկայացվում նրա գործունեության վերջին շրջանը և նահատակության իրական հանգամանքները. «Նա ինքը գնաց արեան ու զոհողութեան ճանապարհով, նա ինքը գահավէժ սլացաւ դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, ուսկից դարձ չկայ... Եւ ընկաւ կէս – ճանապարհին, շանթահարուած անարգ պատահարից...»[2]:

Միայն երկու տարի անց, երբ այլևս անհրաժեշտություն չկար սքողելու Քրիստափորի կյանքի վերջին էջերը, «Դրոշակ»-ը բացում է փակագծերը՝ յուրովի լրացնելով մահախոսականի անորոշ տողերը. «Դարերով հալածուած ու տառապած հայ ժողովրդի բողոքն էր ներկայացնում նա իր էութեամբ, և նրա դարերի կրած զրկանքների և վիրաւորանքների յաշուեյարդարութիւնն էր դարբնում իր գոռոզ կրծքում. երեք հարիւր հազար նահատակների վրեժն էր սնուցանում նա իր անզուսպ սրտում: Եւ ռազմիկների մի ամբողջ բանակ նրա ետևը կանգնած սրտատրոփ սպասում էր արդար հատուցման այն ոճրագործի, որի ձեռքերով այնչափ դիակներ փռուեցան մեր հայրենիքի աւերուած ու մոխրացած փլատակների տակ: Մի ամբողջ ժողովուրդ, շունչը կտրած, ականջ էր դառել լսելու մեծ *պայթիւնը* և *Վիշապի* տապալումը: Սակայն բախտը ուրիշ կերպ էր տնօրինել: Սպանիչ պայթիւնը տեղի ունեցաւ անժամանակ և իր հետ անդարձ կերպով տարաւ *ապատութեան Մարտիկին*»[3]:

Քրիստափոր Միքայելյանի նահատակությունը ցավի և ափսոսանքի զգացում առաջ բերեց հայ հասարակության տարբեր խավերի շրջանում, ինչն իր արձագանքը գտավ նաև հայ մամուլի էջերում[4]: Մեկ տարի անց, երբ այլևս հարկ չկար քողարկելու նրա նահատակության իրական հանգամանքները, իսկ գրաքննությունն էլ էապես մեղմացած էր, եզեպոսյան լեզուն մի կողմ է թողնում նաև «Մշակ»-ը՝ ազդարարելով Քրիստափորի իրական դերակատարությունը՝ որպես արևմտահայ ազատամարտի կենտրոնական ու կազմակերպիչ գործիչներից մեկի, որպես ՀՅԴ-ի առաջնորդի[5]:

Վիտոշի աղետը բարդ իրավիճակի առջև է կանգնեցնում ոչ միայն Ցուցական մարմնին, որը կորցրել էր իր երկու առանցքային ու հեղինակավոր գործիչներին, այլև ՀՅԴ ղեկավարությանը: Երկրում Սասունի 1904 թ. շարժումից հետո ստեղծված մտահոգիչ իրավիճակը, Կովկասում օրեցօր թափ առնող հայ-թաթարական կռիվները և ռուսաստանյան հեղափոխության աստիճանական վերելքը վերջինիս մինչ այդ արդեն կանգնեցրել էին ոչ դյուրին որոշումներ կայացնելու անհրաժեշտության առջև: Այժմ այդ ամենին հավելվում էր նաև նոր իրավիճակում «Նժույգի գործ»-ի հաջողության նկատմամբ թերահավատությունը:

---

[1] *Տե՛ս «Դրօշակ», 1905, N 4, էջ 52-53:*

[2] *Նույն տեղում, էջ 51:*

[3] *Նույն տեղում, 1907, N 3, էջ 42-43:*

[4] *Վիտոշի աղետը և Ք. Միքայելյանի նահատակությունը մեծ արձագանքներ են ունեցել հայկական միջավայրում: Դրան անդրադարձել և ուշագրավ գնահատականներ ու բնութագրումներ են տվել ոչ միայն ժամանակի հայ մամուլի տարբեր օրգաններ, այլև հայ մտավորականության մի շարք նշանավոր ներկայացուցիչներ: Մեր առաջիկա հրապարակումներից մեկը կնվիրենք այդ հարցին:*

[5] *Տե՛ս «Մշակ», 12 մարտի 1906, N 55:*

1905 թ. ապրիլին, նախորդի համեմատ ընդլայնված կազմով, այդ թվում՝ Ցուցական մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, իր աշխատանքն է վերսկսում ՀՅԴ Խորհուրդը[1]: Բանն այն է, որ իրենց զինակիցների նահատակությունից հետո Ցուցականի՝ Կ. Պոլսում մնացած անդամները և օժանդակ գործիչները վճռում են ավարտին հասցնել ծրագրված գործը: Քրիստափորից հետո Ցուցականի առանցքային դեմքը դառնում է Սաֆոն (Մարտիրոս Մարգարյան): Նահատակված ընկերներին փոխարինելու, մասնագետների հետ ձեռնառումբերի ու կառք-ռումբի վերաբերյալ խորհրդակցելու և համապատասխան պատվերներ տալու նպատակով նա՝ օժանդակ գործիչ, ազգությամբ գերմանուհի Մարի Զայցի ուղեկցությամբ, Կ. Պոլսից անցնում է Սոֆիա, ապա՝ Ժնև: Այստեղ, որպես Ցուցական մարմնի ներկայացուցիչ, Սաֆոն մասնակցում է ՀՅԴ Խորհրդին[2]:

Դաշնակցության Խորհրդում քննարկված առանցքային հարցերը «Տաճկահայաստանի մարտավարություն»-ը և «Կովկասյան նախագիծ»-ն էին: Ցուցական մարմնի առջև դրված խնդիրներն ուղղակիորեն առնչվում էին դրանցից առաջինի հետ: Խորհրդին մասնակցող մի շարք գործիչներ (Հ. Լորիս Մելիքյան, Ա. Ահարոնյան, Հ. Օհանջանյան, Մ. Վարանդյան, Սաֆո) հանդես եկան նախորդ 6-7 տարիների գործելակերպի քննադատությամբ: Արձանագրելով ժողովրդին զինելու գործում ունեցած համեստ արդյունքները, քրդերի հետ համերաշխություն հաստատելու անհնարինությունը և այլ հանգամանքներ՝ նրանք առաջարկում էին հրաժարվել Մեծ Հայքի տարածքում ուժերի կենտրոնացման գաղափարից՝ այնտեղ զբաղվելով լոկ ինքնապաշտպանության կազմակերպմամբ, փոխարենը՝ տևական և ուժեղ ապստամբության համար ուժեր կենտրոնացնել Կիլիկիայում կամ ամեն կերպ հարվածել եվրոպական շահերին բուն Տաճկաստանում:

Դրան հակառակ՝ Ռոստոմը, Անդրանիկը և Սարգիս Բարսեղյանը, պաշտպանելով կիրառվող մարտավարությունը, առաջարկում էին կենտրոնացման շրջան դարձնել Վասպուրականը: Կասկածի տակ դնելով Կիլիկիայում առանձին շարժում սկսելու միջոցով Հայկական հարցը լուծելու հնարավորությունը, նաև բացառելով Մեծ Հայքի տարածքում ժողովրդական ընդհանուր ապստամբություն կազմակերպելու կարելիությունը՝ նրանք առաջարկում էին ինքնապաշտպանության հողի վրա զարկ տալ Վասպուրականի, Մոկսի, Շատախի ու Կարկառի պատրաստության գործին և այնտեղ ստեղծել դիմադրական ուժ[3]:

Ծանոթանալով հարցի վերաբերյալ նաև Ք. Միքայելյանի, Ս. Զավարյանի և այլոց գրավոր կարծիքներին՝ Խորհուրդը բուռն քննարկումներից հետո Արևմտյան Հայաստանում կիրառվելիք մարտավարության վերաբերյալ ընդունում է հետևյալ բանաձևը. «Ի նկատի ունենալով, որ եւրոպական ազդու միջամտութիւններ առաջ բերելու եւ Հայկ. հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատեւ ուժեղ դիմադրութիւն, իսկ այդպիսի դիմադրութիւն հնարավոր է միմիայն լուրջ պատրաստութիւնից հետոյ,

Խորհուրդը որոշեց՝

Խոյս տալով ամէն տեսակ կանխաժամ եւ վտանգող որեւէ ընդհարումէ, զգուշաւոր, լիակատար եւ իրական պատրաստութեամբ հայ կռուող ազգաբնակչութեան զգալի մասը զէնքով դիմադրելու կարողութեան մէջ դնելէ յետոյ, ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում եւ Լեռնավայրում:

Ամէն կերպ աշխատել յիշեալ երկու վայրերու շարժումը համաձայնեցնել իրար հետ»[4]:

Ընդունված որոշումը խոսում էր այն մասին, որ.

1. Սասունի ապստամբությունից հետո ստեղծված իրավիճակում ՀՅԴ-ն, թեկուզ առժամանակ, հրաժարվում էր Տարոն-Սասունում ուժերի կենտրոնացման նախկին գործելակերպից:

---

[1] *Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետ՝ Նիւթեր...), Բ. հատոր, բ. տպագր., խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, 1985, էջ 227:*

[2] *Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, 1982, էջ 205-206:*

[3] *Տե՛ս նույն տեղում, Բ. հատոր, էջ 227-228:*

[4] *Նույն տեղում, էջ 228-229:*

2. Արևմտյան Հայաստանում առաջին պլան մղելով ինքնապաշտպանության խնդիրը, ուժերի կենտրոնացման շրջան և ապագա ապստամբավայր էր առաջադրվում Վասպուրականը: Հենց այս հանգամանքով էր պայմանավորված այն եռանդուն գործունեությունը, որը հետագա երեք տարիներին ծավալում է դաշնակցությունը Վասպուրականը զինելու ուղղությամբ:

Արևմտահայ ազատագրական պայքարի մարտավարության հետ կապված ՀՅԴ Խորհրդի քննարկման առարկա են դառնում նաև Ցուցական մարմնին առնչվող խնդիրները: Հրապարակված որոշ փաստաթղթեր հիմք են տալիս ենթադրելու, որ «Նժույգի գործ»-ի հաջողության և այն ավարտին հասցնելու նպատակահարմարության հարցում եղել են որոշակի կասկածներ և վերապահություններ: Վիտոշի աղետից հետո այդ հարցում առկա մտայնության մասին որոշակի պատկերացում է տալիս ՀՅԴ Արևմտյան բյուրոյի 1905 թ. «Համառոտ տեղեկագիր»-ը: «Հարուածը մեծ էր ամբողջ կազմակերպութեան եւ մասնաւորապէս Ցուցականի համար, - ասված էր դրանում, - Վիշապի խնդիրը բարդացաւ. յաջողութիւնը այլեւս չէինք ընդնշմարում նախկին վստահութեամբ: Այնուամենայնիւ ողջ մնացած անդամները որոշեցին շարունակել գործը:

Նոյն միջոցներում գումարուած Դաշնակցութեան Խորհուրդը սանկցիա տուեց այդ որոշման եւ ընկերները դիմեցին իրենց ձեռնարկին»[1]:

Չնայած թույլտվությանը՝ ձեռնարկի հաջող իրականացման վերաբերյալ թերահավատությունը չի վերանում: Հաջողության շանսը փոքր էր համարում և ի սկզբանե դրան դեմ էր Ռոստոմը[2]: Կտրուկ փոխվում է Սարգիս Բարսեղյանի վերաբերմունքը: Եթե Վիտոշի աղետից հետո նա մի պահ հակված էր համալրել Ցուցականի կազմն ու մտնել Կ. Պոլիս, ապա ՀՅԴ Խորհրդի աշխատանքի ընթացքում հրաժարվում է այդ մտադրությունից և իր թեկնածությունն առաջադրում բուն Երկրում գործելու համար[3]: Նույն օրերին Սարգիս Բարսեղյանն ընդգրկվում է ՀՅԴ Խորհրդի կողմից ձևավորված ՀՅԴ Վանի կենտրոնական կոմիտեի կազմում և մեկնում Վան[4]:

«Նժույգի գործ»-ի նկատմամբ վերապահ մոտեցման մասին է վկայում նաև այն, որ Դաշնակցության Խորհուրդը և Արևմտյան բյուրոն թեև ի պաշտոնե պարտավոր էին Վիտոշի աղետից հետո համալրել Ցուցականի կազմը, բայց, ինչպես պնդում է Սաֆոն, այդ հարցում իր կողմից արված առաջարկը դրական վերաբերմունքի չի արժանացել[5]:

Ցուցականի անդամների՝ ձեռնարկն ավարտին հասցնելու վճռականությունը, արդեն կատարված մեծ ծախսերը և այլ հանգամանքներ բավականին զորեղ կռվաններ էին գործն ավարտին հասցնելու համար: Ուստի Դաշնակցության Խորհրդի՝ 1905 թ. համար կազմած նախահաշվում ևս 30.000 ռուբլի է առանձնացվում Ցուցականի կարիքները հոգալու համար[6]: Դրանով հանդերձ, հնարավոր ձախողումը բացառելու համար Խորհուրդն ընդունում է իր իրավասությունների շրջանակից ինչ-որ առումով դուրս մի բանաձև, որի դեմ կտրուկ բողոքում է Սաֆոն: «Ի նկատի ունենալով Վիշապի ձեռնարկի ահագին կարեւորութիւնը, - ասվում էր դրանում, - եւ այն վտանգը նրա յաջողութեան դէմ, որ կարող է առաջ բերել Ոսկեհանքում (Իզմիր) առաջ գալիք ցոյցը.

Խորհուրդը որոշում է՝

Ոսկեհանքի ձեռնարկութիւնը կատարել անպատճառ Վիշապի ձեռնարկից յետոյ եւ յատկապէս այն դէպքում, երբ առաջինից սպասուած հետեւանքները յօգուտ մեր Դատի ի դերեւ ելնեն շնորհիւ եւրոպական պետութիւնների անտարբերութեան»[7]:

---

[1] Նույն տեղում, Դ. հատոր, էջ 79:
[2] Տե՛ս նույն տեղում, Գ. հատոր, բ. տպագր., խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, 2007, էջ 267:
[3] Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 206:
[4] Տե՛ս նույն տեղում, Բ. հատոր, էջ 230:
[5] Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 206:
[6] Տե՛ս նույն տեղում, Բ. հատոր, էջ 231:
[7] Նույն տեղում, էջ 229:

Այդ որոշումը թելադրված էր Իզմիրի ՀՅԴ կառույցում ստեղծված իրավիճակով, որին կանդրադառնանք մեր առաջիկա հրապարակումներից մեկում:

ՀՅԴ Խորհրդից հետո «Նժույգի գործ»-ը թևակոխում է միանգամայն նոր փուլ: Ձեռնառումբերին նախապատվություն տալու մասին այլևս չէր կարող խոսք լինել: Ձեռնարկի առանցքում հայտնվում է ռումբի վերածված կառքը: Դրան նպաստում են ինչպես կառք-ռումբին նախապատվություն տալու Սաֆոյի անձնական դիրքորոշումը, այլև օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի որոշ այլ հանգամանքներ: Նախ, հաջողություն երաշխավորող ձեռնառումբերի ստեղծման ջանքերի անպտղությունը և Վիտոշի աղետը խաթարում են այդ հարցում մոտ ապագայում որևէ հաջողության ունենալու հավատը: Մինչդեռ Ցուցական մարմինը պարտավոր էր գոնե 1905 թ. ավարտին հասցնել ծրագրածը:

Երկրորդ, անցած ամիսների ընթացքում էապես կրճատվում է նաև տաղավարից ձեռնառումբեր նետող հնարավոր թեկնածուների ցուցակը: Ք. Միքայելյանի ծրագիրը ենթադրում էր վեց կամ նվազագույնը՝ չորս ռմբաձիգ տղամարդկանց առկայություն: Մինչդեռ, նրա և Վռամշապուհ Քենդիրյանի նահատակվելով և վտանգված օժանդակ գործիչ Կարոյի (Համբարձում Աղաջանյան) Կովկաս վերադառնալով՝ հնարավոր թեկնածուների ցուցակը կիսվել էր: Եթե դրան հավելենք նաև այն, որ, լրտեսների կողմից նկատվելով, գործի համար ոչ պիտանի էր դարձել նաև Ցուցականի անդամ Աշոտ Եղիկյանը, ապա, թերևս, իրավացի էր Սաֆոն, երբ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում պնդում էր, թե Ցուցական մարմինը ձեռքի տակ բավարար թվով ռմբաձիգներ չուներ՝ տաղավարից ռումբեր նետելու համար[1]:

Ձեռնառումբերի հարցում վճռորոշ շրջադարձն, այնուհանդերձ, տեղի է ունենում ռումբերի ու պայթուցիկների հարցով Եվրոպայում ճանաչված մասնագետների հետ ունեցած հանդիպումներից հետո: ՀՅԴ Արևմտյան բյուրոյի, մասնավորապես Ռոստոմի, օժանդակությամբ «Դրոշակ»-ի խմբագրատանը տեղի է ունենում Սաֆոյի հանդիպումը ռումբերի գծով մասնագետ, հայտնի տեսաբան և պրակտիկ Ս. Ռուերիի հետ: Վերջինս Ռուսաստանի ներքին գործերի նախարար Վ. Պլևեի և մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի՝ Ռուսաստանը ցնցած ահաբեկումների մասնակիցներից էր:

Մեկ այլ հոդվածում արդեն անդրադարձել ենք վերոնշյալ անձին և, որոշ փաստերից ելնելով, շատ հավանական համարել, որ Ս. Ռուերի կեղծանվան տակ գործ ունենք Վ. Պլևեի ու մեծ իշխան Սերգեյի ահաբեկումների կազմակերպիչ, էսէռների կուսակցության մարտական կազմակերպության ղեկավար, ռուսական «Ախրանկա»-ի ամենաբարձր վարձատրվող գործակալ և նշանավոր պրովոկատոր Եվնո Ազեֆի հետ[2]: Վերջինս ուներ քիմիկոս-ճարտարագետի կրթություն և, իրոք, ռումբերի գործի մասնագետ էր: Ինչևէ, նրան անվանենք Ս. Ռուերի, ինչպես նա անվանված է ՀՅԴ փաստաթղթերում:

Ռումբերի վերաբերյալ Սաֆոյի հարցումին ի պատասխան՝ Ս. Ռուերին հայտարարում է. *«թէ անհատի վերայ գնալիս չի կարելի վստահիլ ռումբի բեկորների վերայ, որոնց դիպչելը խիստ թէական է, որ գլխաւոր մահացու գործօնը օդի ցնցումն է եւ նրա վերայ պէտք է լինի յոյսը, քանի նա վրիպում չունի»*[3]:

Հետևաբար, ռումբի արդյունավետությունը միանշանակ կախված էր պայթուցիկ նյութի քանակից: Ս. Ռուերին տեղեկացնում է, որ Վ. Պլևեի և մեծ իշխան Սերգեյի համար նախատեսված ռումբերը պարունակել են 2000 գրամ պայթուցիկ նյութ: Բնական է, որ նման չափի ռումբեր հնարավոր չէր տաղավար տանել: Հայ հեղափոխականները, լավագույն դեպքում, կարող էին հույս դնել 300-400 գրամ նյութ պարունակող ռումբերի վրա, մինչդեռ պարզվում է, որ դրանք ի զորու չէին լինելու օդի ցնցումով պատուհասել Մեծ մարդասպանին:

---

[1] *Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 210:*

[2] *Մանրամասն տե՛ս Գրիգորյան Հ., ՀՅԴ Ցուցական մարմնի գործունեությունը «Նժույգի գործ»-ի նախապատրաստման առաջին փուլում (1904 թ. սեպտեմբեր – 1905 թ. մարտ), // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2019, N 2, էջ 79-80:*

[3] *Նիւթեր..., Դ. հատոր, էջ 206:*

Դրան հակառակ, Ս. Ռուերիի հետ խորհրդատվությունը գայթակղիչ առավելություն էր բացահայտում կառք-ռումբի համար: Սաֆոյի այն հարցադրմանը, թե խմբագրատան պարտեզում՝ իրենցից 30 մ հեռավորության վրա, 100 կգ մելինիտ պարունակող արկղի պայթյունից հետո հնարավո՞ր է ողջ մնալ, հետևում է անսպասելի պատասխան. *«Ոչ միայն դուք չէք կարող կենդանի մնալ ոչ մի դէպքում, այլ այս ձեր ամբողջ խմբագրատունը օդը կ'ելնէ մի այդպիսի քանակութիւնից»*[1]:

Ս. Ռուերիի պատասխաններն որքան էլ գայթակղիչ էին և ոգևորիչ հեռանկարներ էին բացում գործի հաջողության համար, այնուհանդերձ պատասխանատվությունն այնքան մեծ էր, և չնչին սխալն անգամ անցանկալի, որ հարկ եղավ Ս. Ռուերիի ասածները լրացուցիչ փորձագիտական քննության ենթարկել՝ խորհրդակցելով ևս մեկ հեղինակավոր մասնագետի հետ: Սաֆոն մեկնում է Փարիզ և բժիշկ Հ. Լորիս Մելիքյանի հանձնարարական նամակով ներկայանում ազգությամբ լեհ քիմիկոս, պայթուցիկ նյութերի մասնագետ, իր հեղափոխական հայացքներով հայտնի պրոֆ. Ռոբանովիչին: Վերջինս պատրաստակամություն է հայտնում պատասխանել Սաֆոյին հետաքրքրող հարցերին: Նրա առջև Սաֆոն դնում է նոր հարցադրում. խնդրում է հաշվարկել, թե որքան պայթուցիկ նյութ է անհրաժեշտ 30 մ շառավղով ամեն ինչ ոչնչացնելու համար: Արվում են նաև «Նժույգի գործ»-ից բխող տեխնիկական և օժանդակ բնույթի այլ հարցադրումներ. ո՞ր տիպի ռումբերն են նախընտրելի, որքա՞ն պետք է լինի պայթուցիկի համար նախատեսվելիք մետաղական սնդուկի պատերի հաստությունը, նյութի քանակի նկատմամբ ի՞նչ հարաբերակցություն պետք է ունենա պայթուցիկ սնդիկը, ինչպե՞ս կարելի է որոշել մելինիտի խոնավությունը և այլն:

Երեք օր անց Սաֆոն Ռոբանովիչից ստանում է վերոնշյալ հարցադրումների պատասխանները: 30 մ շառավղից ներս ընկած տարածքում կենդանի ամեն ինչ ոչնչացնելու համար բավարար էր համարվում 12-15 կգ լավ որակի մելինիտը: Ապահովության համար խորհուրդ էր տրվում օգտագործել 20 կգ: Առաջարկվում էր յուրաքանչյուր կիլոգրամ մելինիտի համար օգտագործել 2-3 գրամ պայթուցիկ սնդիկ: Մետաղե սնդուկի հարցում իրեն մասնագետ չհամարելով հանդերձ՝ Ռոբանովիչը կարևորում էր այն, որ դրա պատերն ունենան այնպիսի ամրություն և դիմադրության այնպիսի աստիճան, որ ամբողջ պայթուցիկը գազանալու հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում պայթյունը կարող էր լինել մասնակի, իսկ արդյունքը՝ անհամեմատ համեստ: Ինչպես Ս. Ռուերին, Ռոբանովիչը նույնպես հավատացած էր, որ ռումբ գործածելիս հույսը պետք է դնել ոչ թե բեկորների, այլ պայթուցիկ նյութի քանակի վրա: Բավարարություն էին տրվում նաև տեխնիկական բնույթի հարցադրումներին: Մասնավորապես ցուցումներ են տրվում փոշենման մելինիտը հալելու և դոնդող (ժելե) դարձնելու վերաբերյալ, քանի որ այդ վիճակում մելինիտի զորությունը շուրջ 25-30%-ով մեծանում էր:

Շուրջ մեկ ժամ տևած հանդիպման վերջում Սաֆոն անում է վերջին, թերևս ապագայի համար վճռորոշ հարցադրումը. «Պրն Ռոբանովիչ, դուք յայտնեցիք, թէ 15-20 կիլոն բաւական է 30 մետր շառաւիղով տարածութեան համար ամէն ինչ ոչնչացնելու:

Դուք տալի՞ս էք գիտնականի խօսք, որ եթէ 20-ի փոխարէն 100 կիլօ լինի – ոչինչ կենդանի մնալ այդ տարածութեանը վերայ չի կարող»:

Հետևում է Ռոբանովիչի զարմացած, բայց նաև վճռական պատասխանը. «Այդ խօսքը ձեզ գիտութիւնն է տալիս...»[2]:

Այսպիսով, Ս. Ռուերիի և Ռոբանովիչի հետ մասնագիտական խորհրդատվությունները վերջակետ էին դնում «Նժույգի գործ»-ում գլխավոր հարվածի շուրջ ամիսներ շարունակվող, զուտ տեսական բնույթ կրող բանավեճին: Ռումբի վերածված կառքը նախապատվություն էր ստանում որպես գլխավոր հարվածի միջոց: Դրանից հետո, եթե անգամ օրակարգում շարունակեր մնալ նաև տաղավարից ձեռնառումբեր նետելու տարբերակը, ապա՝ լոկ

[1] *Նույն տեղում:*
[2] *Նույն տեղում, էջ 207-208:*

օժանդակ հարվածի կարգավիճակով: Դեպքերի զարգացման բերումով Ցուցական մարմինը հետագայում ընդհանրապես հրաժարվում է տաղավարից ռումբեր նետելու գաղափարից՝ դա հիմնավորելով հետևյալ փաստարկներով.

ա) Կառք-ռումբի պայթյունի հետևանքով զոհվելու էին որոշակի շառավղից ներս գտնվող բոլոր մարդիկ, այդ թվում՝ տաղավարում գտնվողները:

բ) Կառք-ռումբի պայթյունից հետո, դետոնացիայի օրենքով, անմիջապես պայթելու էին նաև ձեռնառումբերը:

Հետևաբար, ըստ այդ տրամաբանության, կառքի պայթյունից հետո ո՛չ ողջ ռմբաձիգ էր մնալու, որպեսզի նետեր ռումբերը, և ո՛չ էլ չպայթած ռումբեր էին մնալու:

Ստացած պատասխանը, բնականաբար, ոգևորում է մինչ այդ էլ կառք-ռումբը նախընտրող Սաֆոյին: Առավել ևս, որ հեղինակավոր երկու մասնագետներ, միմյանցից անկախ, միանշանակ հաստատագրում էին մեծ ռումբի արդյունավետությունը: Հ. Լորիս Մելիքյանին և «Դրոշակ»-ի խմբագրությանը տեղյակ պահելով Ռոբանովիչի հետ ունեցած հանդիպումների արդյունքների մասին՝ Սաֆոն շտապում է կարգավորել կառքի հարցը: Քանի որ Փարիզից Կ. Պոլիս կառքեր չէին ուղարկվում, նա շտապում է Վիեննա՝ այնտեղ կարգադրելու այդ խնդիրը[1]:

Հետագայում Վիեննայում թուրքական դեսպանատան կողմից անցկացված փնտրտուքը թույլ է տալիս ճշտել ինչպես կառքի ձեռքբերման հանգամանքները, այնպես էլ Ս. Ռուերիի ու Ռոբանովիչի հետ Սաֆոյի ունեցած հանդիպումների՝ ցայսօր չճշտված մոտավոր ժամկետները: Դրանք բոլորն էլ թվագրվում են ոչ ուշ, քան 1905 թ. ապրիլի առաջին կեսով: Վիեննայի թուրքական դեսպանատան կողմից Կ. Պոլիս ուղարկված ընդարձակ տեղեկագրում հայտնվում էր, որ «Վիկտորիա» մակնիշի կառքը պատրաստվել է Նասելդորֆեր գործարանում: Այն պատվիրվել էր ապրիլի երկրորդ շաբաթվա մեջ գործարան այցելած Մարի Զայցի կողմից: Վերջինիս ուղեկցում էր ինքնությունը չբացահայտած և իբրև բուլղարացի ներկայացած մի տղամարդ՝ ամենայն հավանականությամբ Սաֆոն: Հավանելով կառքը՝ պատվիրատուները ցանկություն են հայտնել, որ կառապանի աթոռակը սովորական 38x30 սանտիմետրի փոխարեն ունենա 45x40 սանտիմետր չափեր: Դա հնարավորություն կտար զգալիորեն մեծացնել աթոռակի ներսում տեղադրվելիք ռումբի հզորությունը: Առարկելով, որ դա կտգեղացնի կառքը, գործարանատերը, այնուհանդերձ, համակերպվում է պատվիրատուների պահանջի հետ և 1905 թ. ապրիլի 26-ին 5000 ֆրանկ գումարով արձանագրվում է վաճառքի գործարքը:

Կառքը Կ. Պոլիս է ուղարկվում Սիլվիո Ռիչչիի (Քրիս Ֆանարջյան) հասցեով: Մայիսի 9-ին կամ 10-ին այն փոխադրող «Դալմաթիա» շոգենավն արդեն Կ. Պոլսում էր: Բայց, տեխնիկական ու թղթաբանական անհարթությունների պատճառով, կառքը մաքսատնից դուրս է բերվել միայն մայիսի վերջին օրերին[2]: Մինչ այդ՝ մայիսի սկզբներին, կառքի համար 46 օսմանյան ոսկով գնվել էին դերասանապետ Հասան Էֆենդուն պատկանող զույգ հանդարտ ձիերը, և վարձվել համապատասխան ախոռ ու կառատուն[3]:

Սաֆոն Վիեննայում գնում և Է. Ժորիսի հասցեով Կ. Պոլիս է ուղարկում նաև երկու վայրկենացույց ժամացույցեր[4]:

Լուծելով կառքը Կ. Պոլիս ուղարկելու խնդիրը՝ Սաֆոն դեռևս չի շտապում այնտեղ: Անցնելով Սոֆիա՝ նա մի կողմից անձամբ կատարած փորձարկումներով ստուգում է հեղինակավոր մասնագետների ասածների ճշտությունը, մյուս կողմից՝ վերջին փորձերը կատարում Քրիստափորի ստեղծած ձեռնառումբերի ավտոմատ գլխիկների կատարելագործման

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 208:*

[2] *Տե՛ս Եըլտըզի մահափորձը. Եղեռնական ատեանի դատաւարութիւնը տեղի ունեցած Պոլսոյ մէջ, 1905 նոյեմբերին, Աթէնք, 1933 (այսուհետ՝ Եըլտըզի մահափորձը...), էջ 20-23, 44:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 21: Նաև՝ Եապրճեան Գ., Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980, էջ 417:*

[4] *Տե՛ս Եըլտըզի մահափորձը..., էջ 45:*

և ձեռնառումբերի ստեղծման ուղղությամբ: Վերջինիս նպատակաուղղված երկշաբաթյա փորձերը դարձյալ արդյունավետ չէին: Վրիպումների քանակը նշանակալից էր: Կատարելագործված գլխիկներ ունեցող ձեռնառումբերով Սաֆոն մասնակցում է նաև բուլղարական գլխավոր սպայակույտի ռմբաձգության փորձերին, բայց նետված ռումբը դարձյալ չի պայթում: Դրան հակառակ, միանգամայն գոհացուցիչ էին մելինիտի պայթեցումների արդյունքները: Պայթուցիկներ մատակարարող վաճառական Թյուֆալչևի և բուլղարացի հեղափոխական Լյապովի հետ Սոֆիայից դուրս կատարված փորձարկումները լիովին հաստատում էին Ս. Ռուերիի և Ռոբանովիչի ասածները: Բազմատեսակ փորձերի համար օգտագործվում է 60-65 կգ մելինիտ: Մասնավորապես, 14 կգ մելինիտի պայթյունից առաջացած օդի ցնցումը մահացու էր 10 մետր հեռավորության վրա գտնվող ձիու համար[1]:

Վերջին կասկածները փարատված էին, և Սաֆոն ամբողջովին լծվում է կառք-ռումբի միջոցով «Նժույգի գործ»-ը ավարտին հասցնելուն: Լինելով ուժեղ բնավորության տեր անձնավորություն՝ նա իր կամքին է ենթարկում Ցուցականի մյուս անդամներին և օժանդակ գործիչներին: Եթե հետագա ամիսներին Ցուցական մարմնում ինչ-ինչ տարակարծություններ նկատվում էլ են, ապա՝ լոկ կառք-ռումբի կիրառման այս կամ այն հարցի հետ կապված:

Հրաժարվելով տաղավարից ձեռնառումբեր նետելու տարբերակից՝ Ցուցական մարմինը հարկադրված էր էական շտկումներ և փոփոխություններ կատարել նաև կառք-ռումբի նախնական տարբերակում: Դրանք պայմանավորված էին ոչ միայն ձեռնառումբերից հրաժարվելու հանգամանքով, այլև Կ. Պոլսում ստեղծված նոր իրավիճակով: Նախորդ ամիսների մի քանի իրադարձություններ ավելի զգուշավոր և աչալուրջ էին դարձրել օսմանյան իշխանություններին:

Նախ, որքան էլ զգուշությամբ էին Կ. Պոլիս մտցվում «Նժույգի գործ»-ի համար պահանջվող նյութերը, այնուհանդերձ ձախողումներն ընդհանրապես բացառել չի հաջողվում: Մեկ անգամ ոստիկանության ձեռքն են ընկնում էլեկտրական մեքենաների պարագաներ, հրապատիճներ (կապսյուլ), դժոխային մեքենայի ժամացույցներ, պատրույգներ և հաղորդիչներ: Երկրորդ դեպքում Կ. Պոլիս մտցնելու պահին բռնվում է 15 ձեռնառումբերով լի մի զամբյուղ: Ոստիկանական քննությունը պարզում է, որ բեռներն ուղարկել են Վառնայից, իսկ ուղարկողներն էլ հայեր են եղել:

Երկրորդ, թուրքական իշխանությունների ուշադրությունից չի վրիպում 1904 թ. նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին ձեռնառումբեր պատրաստելու գործով զբաղված օժանդակ գործիչներ Սարգսի, Լևոնի ու Կարոյի ձերբակալվելը Վառնայում և նրանց մոտ ձեռնառումբերի, մելինիտի ու Ցուցականի անդամների՝ Կ. Պոլսի հասցեների հայտնաբերումը[2]:

Վերջապես, Վիտոշի աղետը, դրա լայն արձագանքը բուլղարական մամուլում, Քրիստափորի ու Վռաշապուհի բազամարդ և տպավորիչ հուղարկավորությունը Սոֆիայում առաջացնում են թուրքական կառավարության անհանգստությունը[3]:

Վերը բերված փաստերի համադրումն ակնհայտ վկայում էր, որ հայերի կողմից Բուլղարիայում կատարվող ռումբերի փորձարկումներն անմիջականորեն առնչվում էին Կ. Պոլսում նախապատրաստվող դավադրական ձեռնարկների հետ: Ուստի, չբավարարվելով բուլղարական կառավարությանը պաշտոնական բողոք հայտնելով, թուրքական իշխանություններն անվտանգության նկատառումով լրացուցիչ միջոցառումներ են իրականացնում Կ. Պոլսում: Դրանք, բնականաբար, չեն շրջանցում սուլթանի անվտանգության համակարգը:

Կ. Պոլսում նոր խուզարկություններին և ձերբակալություններին զուգընթաց հատկապես կարևոր փոփոխություններ են կատարվում ուրբաթօրյա սելամլըքի արարողությանը

---

[1] *Տե՛ս Նիւթեր..., Դ. հատոր, էջ 208-209:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 205: Նաև՝ Ե. հատոր, խմբ. Ե. Փամբուկեան, Պէյրութ, 2007, էջ 406-407, 426:*

[3] *Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 209:*

մասնակցող զորքերի դասավորության մեջ: Պալատական մզկիթի դիմաց գտնվող «Y» փողոցում, որտեղ նախապես ծրագրվում էր պայթեցնել կառք-ռումբը, պահապան հեծելազորքն առաջին ծառի մոտից ետ է բերվում մինչև երրորդ ծառի ետևը: Հետևաբար, կառք-ռումբն անմիջական թիրախից հեռանում էր շուրջ 30 քայլ, ինչը կասկածի տակ էր դնում նման հեռավորությունից «Նժույգին» խոցելու հնարավորությունը[1]:

Նոր իրավիճակում «Y» փողոցին իրական այլընտրանք է դառնում մզկիթից ներքև գտնվող մարզարանի հրապարակը: Կառքը կանգնեցնելով վերջինիս պարտեզի առջև գտնվող դռան մոտ՝ պատի կողքին, հնարավոր էր դառնում փոխհատուցել 30 քայլի կորուստը և շուրջ 30-40 քայլով մոտենալ սուլթանի անցնելիք ճանապարհին: Բայց այս տարբերակը ևս ուներ իր բարդությունները:

Բանն այն է, որ ավելացվել էին նաև մարզարանի հրապարակում կանգնող հեծելազորի շարքերը, ինչը թույլ չէր տալիս նախքան սուլթանի՝ մզկիթ՝ նամազի իջնելու պահը կառքը կանգնեցնել մարզարանի պատի մոտ և ապահովել հարվածի նվազագույն շառավիղ: Նման հնարավորություն ստեղծվում էր միայն սուլթանի՝ մզկիթ մտնելուց հետո, երբ մարզարանի հրապարակում կանգնած հեծելազորքի մեծագույն մասը հեռանում էր[2]: Դա նշանակում էր, որ անհրաժեշտ էր փոխել պայթյունի համար նախատեսված պահը: Եթե նախնական տարբերակով կառք-ռումբը պետք է պայթեցվեր, իսկ ձեռնառումբերն էլ նետվեին սուլթանի՝ նամազի գնալու ժամանակ, ապա նոր իրավիճակում կառք-ռումբը նախընտրած տեղում հնարավոր էր պայթեցնել միայն սուլթանի՝ մզկիթից դուրս գալու պահին:

Քանի որ կառքը կանգնեցնելու տեղի փոփոխման հետ կապված փոխվում էր թիրախի առավելագույն խոցելիության կետը, և այն հայտնվում էր տաղավարից շուրջ 60 քայլ հեռավորության վրա, ապա գործնականում այլևս անհնարին էր դառնում տաղավարից ձեռնառումբի արդյունավետ նետումը և այն կառք-ռումբի հետ զուգակցելը: Հաշվի առնելով վերոնշյալ իրողությունները՝ Ցուցական մարմինը, բնականաբար, պետք է մի կողմ դներ նախկին բոլոր հաշվարկները և քայլ առ քայլ նոր ուսումնասիրություններ կատարեր:

Եվրոպայում «Նժույգի գործ»-ի հետ կապված նախապատրաստական հարցերը լուծելուց հետո Սաֆոն Մարի Զայցի հետ 1905 թ. մայիսի 27-ին վերադառնում է Կ. Պոլիս: Մի քանի օր բնակվելով հյուրանոցում, ապա Բերա փողոցի թիվ 12 տանը, նրանք, Կ. Պոլսից մեկնելու պատրվակով, իրականում հետքերը խճճելու նպատակով, հունիսի 15-ին հեռանում են այնտեղից և Ցուցական մարմնի հետ համագործակցող բելգիացի անիշխանական Է. Ժորիսի միջնորդությամբ հաստատվում վերջինիս վարձակալած բնակարանի հարևանությամբ՝ մի փոքր տան մեջ[3]: Սկսվում է Ցուցական մարմնի գործունեության եզրափակիչ փուլը:

«Նժույգի գործ»-ի տեխնիկական նախապատրաստությանը զուգընթաց ընդունվում են կազմակերպական բնույթի մի քանի որոշումներ: Օրակարգում այլևս չէր շրջանառվում տաղավարից ձեռնառումբեր նետելու հարցը, իսկ կառք-ռումբի նախապատրաստումն ու պայթեցումը մեծ թվով մասնակիցներ չէր պահանջում: Կ. Պոլսում Ցուցական մարմնի տրամադրության տակ եղած ուժերը միանգամայն բավարար էին համարվում դրա համար: Ելնելով դրանից՝ Ցուցական մարմինն իրենց պարտականություններից ազատ է համարում դրսում գտնվող բոլոր օժանդակ գործիչներին՝ այդ մասին տեղյակ պահելով նրանց:

Հաջորդ խնդիրը Ցուցական մարմնի կազմի համալրումը և ամբողջացումն էր: Վիտոշի աղետից հետո այն դրսից համալրելու փորձը չէր հաջողվել: Ցուցականի անդամներից Աշոտ Եղիկյանին էլ չի հաջողվում լրտեսներից մինչև վերջ աննկատ մնալ և այլևս ի զորու չէր լիարժեք գործել: Իր կազմն ամբողջացնելու նպատակով 1905 թ. հունիսին Ցուցական մարմինն առավել ակտիվ օժանդակ երկու գործիչների՝ Քրիս Ֆանարջյանին և Ռուբինա Արեշյանին, ընտրում է Ցուցականի անդամներ:

---

[1] *Տե՛ս նույն տեղում:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 210:*

[3] *Տե՛ս Եղլտրպի մահափորձը..., էջ 32, 45:*

Ի դեպ, Ցուցական մարմինը սկզբում բացասական դիրքորոշում ուներ Ռուբինայի՝ Կ. Պոլիս վերադառնալու հարցում: Նախ, արդեն ասվել է, դրսում գտնվող օժանդակ բոլոր գործիչները, հետևաբար՝ նաև Ռուբինան, իրենց պարտականություններից ազատ էին համարվել: Դրան հավելվում էր նաև այն, որ Քրիստափորի նահատակվելուց հետո Ռուբինան այնպիսի նյարդային ու հիվանդոտ վիճակում էր, որ նրա՝ Կ. Պոլիս վերադարձը գործի շահի տեսանկյունից վտանգավոր և անցանկալի էր համարվում: Նրա հարցում Ցուցական մարմնի սկզբնական դիրքորոշումը, անշուշտ, միանշանակ արդարացված էր: Չնայած դրան՝ ժնևում գտնվող ՀՅԴ գործիչները և ինքը՝ Ռուբինան, Կ. Պոլիս ուղարկված նամակներով թախանձում էին փոխել կայացված որոշումը: Իր հերթին Ռոստոմը տեղեկացնում էր, որ Ռուբինան արդեն ապաքինվել է և կմեռնի, եթե իրեն թույլ չտրվի մասնակցել «Նժույգի գործ»-ին: Ցուցական մարմինը, ի վերջո, տեղի է տալիս և փոխում նրա վերաբերյալ կայացված նախնական որոշումը: Ռուբինան ոչ միայն հնարավորություն է ստանում վերադառնալու Կ. Պոլիս, այլև ընտրվում է Ցուցականի լիիրավ անդամ[1]:

Նման իրողության պայմաններում տարակուսանք են առաջացնում Ցուցական մարմնի կազմի համալրման և իր՝ Կ. Պոլիս վերադառնալու մասին այն շեշտադրումները, որոնք առկա են տասնամյակներ անց՝ 1939 թ. մարտի 3-ին, Ա. Գյուլխանդանյանին Ռուբինայի գրած հուշ-նամակի հետևյալ տողերում. «Ժընեւ երկու ամիս մնալէս ետք, Սաֆոն տեղեկացրեց որ Պ. Մարմինը զիս ընտրել է *Քրիստափորի տեղ* եւ ես *պէտք է* (ընդգծումները մերն են – Հ.Գ.) վերադառնամ Պոլիս»[2]: Տարօրինակ է նաև, որ նույն նամակում Ռուբինան Քրիսին համարում է ի սկզբանե Ցուցական մարմնի անդամ, իսկ Վռամշապուհ Քենդիրյանին՝ սոսկ գործի մասնակից[3]: Դժվար է ասել. Ռուբինայի նման մեկնաբանությունները հետին թվով սեփական դերը գերագնահատելու միտո՞ւմ ունեին, թե՞ հետևանք էին տասնամյակներ անց որոշ փաստերի բնական մոռացության: Երկու դեպքում էլ մի բան ակնհայտ է՝ նրա նամակի այդ և որոշ այլ փաստեր ու գնահատականներ հեռու էին իրականությունից:

Քննության չեն դիմանում նաև նույն նամակի հետևյալ տողերը. «Պոլսում նոյն Պատասխանատու Մարմնի հետ է որ կ'ունենայինք ժողովներ: Այնտեղ իմ դրութիւնը շատ ծանր էր... Սոֆիան (պետք է լինի Սաֆոն – Հ.Գ.) փոխեց գործելակերպի ծրագիրը եւ ես մենակ է որ չորս անդամի դեմ էի: Այդ դու կարող ես պարզել իմ նամակներիցս, որը ես այդ օրերին գրում էի Ռոստոմին, որոնք արխիւումն են...»[4]: Եթե Ռուբինան, իրոք, չէր հրաժարվել տաղավարից ռումբեր նետելու ծրագրից, ապա, անկախ Ցուցականի մյուս չորս անդամների դիրքորոշումից, կարող էր պաշտպանել իր տեսակետը՝ հենվելով մինչ Ցուցական մարմնի՝ Կ. Պոլիս մտնելը Ք. Միքայելյանի կողմից գրված և այդ մարմնի կողմից հաստատված «Փորձնական կանոնագրի» 13-րդ հոդվածի վրա: Այն ուներ հետևյալ ձևակերպումը. «ԹԷ՛ Պատասխանատու Մարմնի եւ թէ՛ գործադիր կոմիտէների մէջ մեծամասնութեան ձայնը որոշում է բոլոր խնդիրները: *Բացառութիւն է կազմում միայն գլխաւոր ձեռնարկի գործնական ձեւը, որը պէտք է վճռուի տեղումը գտնուող պատասխանատու ընկերների միաձայն հաւանութեամբ* (ընդգծումը մերն է – Հ.Գ.)[5]:

Ստացվում է, որ Ռուբինան, գլխավոր ձեռնարկի գործնական ձևի հարցում Ցուցականի մնացած անդամներից սկզբունքորեն տարբերվող կարծիք ունենալով, այնուհանդերձ չի բարձրաձայնել ու չի պայքարել իր տեսակետի համար, թեև ունեցել է դրա իրավունքը և լոկ բավարարվել է բողոք ու դժգոհություն պարունակող նամակներ գրելով Ռոստոմին: Եվ դա այն դեպքում, երբ ակնհայտ է, որ Ռոստոմը, ինչպես և Ցուցականի անդամ չհանդիսացող ցանկացած անձ, այդ հարցում որոշում կայացնելու իրավունք չի ունեցել:

---

[1] *Տե՛ս Նիւթեր..., Դ. հատոր, էջ 212:*
[2] *Աւօ, Ռուպինա Օհանջանեան, // «Յեղափոխական ալպում», 1972, N 4, էջ 109:*
[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 108-109:*
[4] *Նույն տեղում, էջ 109-110:*
[5] *Նիւթեր..., Դ. հատոր, էջ 222:*

Ցուցականի՝ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին ներկայացրած Տեղեկագիրը և նույն ժողովի այլ փաստաթղթեր վկայում են, որ Ցուցական մարմնի անդամի կարգավիճակով Կ. Պոլիս վերադարձած Ռուբինան ամենևին էլ չի պնդել տաղավարից ռումբեր նետելու վրա: Ցուցականի մյուս անդամների հետ նրա ունեցած տարակարծություններն ավելի շուտ վերաբերվել են կառք-ռումբի գործածման եղանակներին[1]: Այդ օրերին ձեռնարկի վերաբերյալ Ռուբինայի իրական դիրքորոշման մասին հստակ պատկերացում է տալիս ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում Ցուցականի տեղեկագրի քննարկման ժամանակ նրա և Սաֆոյի միջև ծավալված երկխոսության հետևյալ հատվածը.

«Սաֆո.- Դուք հաւատո՞ւմ էիք կառքին:

Ռուբինա.- Այո՛:..

Սաֆո.- Դուք երբեւիցէ առաջարկ արի՞ք ռումբով պաւիլլիոն գնալու:

Ռուբինա.- Ո՛չ, ինչ որ վայրկենաբարն էր, ինձ էր վերաբերում. ինձ վրայ վստահ էի, եւ կ'անէի. իսկ ինչ ուրիշին է վերաբերում՝ չեմ կարող ասել. եւ քանի որ պավիլլիոնից ռումբ նետողն ես չէի լինելու, այդ առաջարկը չէի անի...»[2]:

Ինչևիցե, 1905 թ. հունիսի առաջին կեսին, Ռուբինայի Կ. Պոլիս ժամանելով, Ցուցական մարմնի կազմն ամբողջանում է: Այն ամբողջ թափով ձեռնամուխ է լինում «Նժույգի գործ»-ի եզրափակիչ արարի՝ միմյանց փոխլրացնող երկու խնդիրների իրականացմանը: Մի կողմից դետալ առ դետալ կյանքի էր կոչվում ահռելի հզորության հավակնություն ունեցող կառք-ռումբը, մյուս կողմից՝ ճշգրտվում սելամլըքի արարողության նոր մանրամասներ՝ որոշելու համար կառք-ռումբի պայթեցման առավել նպաստավոր պահը: Վերջինը միանշանակ անհրաժեշտ էր, քանի որ փոփոխված պայմաններն անխուսափելի էին դարձնում լրացուցիչ ուսումնասիրություններն ու ճշգրտումները:

Բանն այն էր, որ նախորդ ամիսների ուսումնասիրությունները գերազանցապես առնչվում էին «Նժույգի գործ»-ի նախնական ծրագրի հետ: Գործելու էր հետևյալ սցենարը. սուլթանի՝ նամազի գնալու պահին, երբ նրա կառքը հայտնվեր տաղավարից նվազագույն՝ 15-17 քայլ հեռավորության վրա, նետվելու էին ձեռնառումբերը, ապա դրան հետևելու էր «Y» փողոցի վրա գտնվող կառք-ռումբի պայթեցումը[3]: Հետևաբար, նախորդ ժամանակային հաշվարկները կապվում էին պալատից սուլթանի դուրս գալու պահի հետ, և արձանագրվում էր այն ժամանակը, երբ սուլթանի կառքի և տաղավարի միջև հեռավորությունը դառնում էր նվազագույն: Մինչդեռ այժմ հարկավոր էր հստակ արձանագրել այն պահը, երբ նամազից վերադարձող սուլթանի կառքը տեսանելի էր դառնում մարզարանի հրապարակում գտնվողների համար և հայտնվում նրանցից նվազագույն հեռավորության վրա: Այս դեպքում ժամանակի արձանագրումը պետք էր սկսել մզկիթի ապակեպատ պատշգամբից սուլթանի իջնելու պահից: Այդ պահը մարզարանի հրապարակից տեսանելի չէր, բայց ազդարարվում էր զինվորական փողի հատուկ ազդանշանով:

Խնդիրն արտաքուստ պարզ էր, բայց ոչ դյուրին: Ամիսներ շարունակ երկու կամ երեք վայրկենաչափերով միաժամանակ չափվել էր այդ ժամանակը: Բայց մեծաթիվ զինվորների ու լրտեսների անմիջական հարևանությունն իրենց դերը խաղում էին: Բնական հուզմունքը և այլ հանգամանքներ թույլ չէին տալիս արձանագրել որևէ հաստատուն ժամանակ: Անգամ միաժամանակ կատարված չափումների տարբերությունը հասնում էր 2-4 վայրկյանի: Երբեմն տարբերությունն ավելի մեծ էր լինում: Բազմաթիվ փորձերի արդյունքում, այնուհանդերձ, արձանագրվում է 1 րոպե 53 վայրկյանը՝ որպես միջին ժամանակ: Բայց ինչ-ինչ պատճառներով Ցուցական մարմինը, ի վերջո, կանգ է առնում 1 րոպե 48 վայրկյանի վրա[4]:

Վերը նշված փաստը ձեռնարկի արդյունքի տեսանկյունից, անշուշտ, էական չէ, բայց հարկ ենք համարում արձանագրել՝ սրբագրելու համար թուրքական աղբյուրներից եկող մի

[1] Տե՛ս նույն տեղում, Գ. հատոր, էջ 266, Դ. հատոր, էջ 212:
[2] Նույն տեղում, Գ. հատոր, էջ 266:
[3] Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 201, 203:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 212, 214-215:

ակնհայտ սխալ: Պատմագիտության մեջ ընդունված է Ելդըզի ռումբի պայթեցման համար Ցուցական մարմնի կողմից ընտրված ժամանակ համարել 1 րոպե 42 վայրկյանը[1]: Ի դեպ, ժամանակին այդ վարկածին տուրք ենք տվել նաև մենք[2]: Թյուրիմացության ակունքները պետք է փնտրել Ելդըզի մահափորձի առթիվ Եղեռնական ատյանի կազմած գործի նյութերում և սուլթանի կենսագիր Թահսին փաշայի «Հիշատակներ»-ում: Ըստ որում, միմյանց փոխլրացնող, բայց նաև հակասող, այդ սկզբնաղբյուրները թույլ են տալիս նաև պատասխանել այն հարցին, թե ինչպես է առաջացել թյուրիմացությունը: Իրականությունը պարզելու համար համադրենք Եղեռնական ատյանի նյութերից քաղված երկու հատվածներ և դրանք համեմատենք Թահսին փաշայի վկայությունների հետ:

«...Քրիստափոր Միքայէլեան, աղջիկը՝ Ռուպինա Ֆայն, Լիփա Ռիփս (Սաֆոն – Հ.Գ.) և Տիկին Սօփի Ռիփս (Մարի Ձայցը – Հ.Գ.), - ասված է ատյանի նյութերում, - երկու անգամ Սելամլըքի հանդիսավայրին բարձրավանդակին վրայ և տասներկու անգամ ալ բարձր արարողութիւնը դիտելու համար սովորաբար եկող միւս հիւրերուն մէջ Մարզարանի հրապարակը գտնուած են, քանիցս ուշադրութիւն ըրած, հաշուած և արձանագրած, որ Մզկիթին ներքին դուռնէն մինչեւ բակին դուռը 1 վայրկեան 42 երկվայրկեանէն (արևմտահայերենում վայրկյանը՝ րոպեի, իսկ երկվայրկյանը՝ վայրկյանի իմաստ ունի – Հ.Գ.) կը հասնի կայսերական կառքը. հետեւաբար «դժոխային մեքենայ» անուն սոսկալի և սպաննիչ նիւթեր պարունակող գործիքը հայթայթելով, կառքի մէջ դրած, նոյն բարձր վայրը մտցուցած և Վեհ. Կայսեր վերադարձին պահուն գործածել որոշած էին»[3]:

Երկրորդը հատված է դատախազ Նեջամեդդին բեյի մեղադրական ճառի այն մասից, որտեղ խոսվում է Է. Ժորիսի ցուցմունքների մասին: «Ժորիս հարցաքննութեան մէջ խոստովանուեցաւ նաեւ, - ասված է դրանում, - որ Ռիփս և կինը, Օր. Ռուպինա Ֆայն, Պոլսոյ մէջ իրենց վերջին այս բնակութեան ատեն, աշխատած են կարեւոր եղած ծրագիրը կազմել, դժոխային մեքենան կրող կառքը անվնաս մտցնելու համար բարձրագոյն վայրը: Ասոր համար Ռուպինա Ֆայն անձամբ կառքով տասը անգամէն աւելի Սելամլըքի բարձրագոյն վայրը գալով, հասարակ այցելուներու մէջ գտնուած էր և դիտած էր, որ Վեհ. Սուլթանը մզկիթ ժամանելէ ետք, Կայս. զօրքերուն մէկ մասին արտօնութիւն կը շնորհուէր, որով մարզարանի բակը մինչեւ մէկ աստիճան պարապ կը մնար, քանիցս դիտած էր նաեւ որ աղօթքէն ետք, Ն. Վեհափառութեան մզկիթէն վերադառնալէն առաջ, կայս. զօրքերը բարեւի յարգական դիրքը կ'առնէին և կայս. կառքը մզկիթին դուռնէն մինչեւ վանդակապատ դրան առջեւ մէկ վայրկեան 42 երկվայրկեանէն կը հասնէր: Ռուպինա Ֆայն այս պարագաները հաշիւ ընելով և արձանագրելով, փորձերով հաստատեց, որ իր այդ դիտողութիւնները անփոփոխ էին ամէն ժամանակի համար: Հետեւաբար, պէտք եղած պատրաստութիւնները ի գլուխ հանելու համար՝ որոշուած էր դժոխային մեքենան կրող կառքը բարձրագոյն վայրը մտցնել և ճիշդ նոյն պահուն բռնկեցնել»[4]:

Մինչդեռ Թահսին փաշան նույն հանգամանքի մասին գրում է. «Մահափորձին հեղինակները հաշուած էին, որ *Սուլթանը ճիշտ մէկ վայրկեան և 42 երկվայրկեանէն կանցնի մզկիթին բակէն մինչև պալատ եղած տարածութիւնը* (ընդգծումը մերն է – Հ.Գ.) և դժոխային մեքենան պայթեցաւ ճիշտ այն վայրկեանին, որուն համար լարված էր...»[5]:

Վերոբերյալ վկայություններում առկա են ակնհայտ հակասություններ և փաստական անճշտություններ: Դա թերևս բացատրվում է նրանով, որ «Նժույգի գործ»-ի ձախողումից հետո ստեղծված եղեռնական ատյանն այդպես էլ չկարողացավ մինչև վերջ բացահայտել

---

[1] *Ակադ. Հ. Սիմոնյանն իր ուսումնասիրության մեջ մատնանշում է միանգամայն այլ ժամանակ՝ 1 րոպե 30 վայրկյան՝ առանց որոշակիացնելու հղման աղբյուրը (տե՛ս Սիմոնյան Հ., Ակատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, էջ 582): Կարծում ենք, որ այն նույնպես չի համապատասխանում իրականությանը:*

[2] *Տե՛ս Գրիգորյան Հ., Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ), // Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր, մաս 2, Ե., 1995, էջ 62:*

[3] *Ելլտըզի մահափորձը..., էջ 8: Նույնը՝ «Արմենիա», 6 դեկտեմբերի 1905, N6:*

[4] *Ելլտըզի մահափորձը..., էջ 46-47:*

[5] *Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 367:*

դավադրության բոլոր դետալները: Այն հաճախ գնացել է Է. Ժորիսի տված թեև ճշմարտախառն, բայց խիստ հակասական, հաճախ ճշմարտությունը քողարկող վկայությունների հետքերով:

Նախ, Քրիստափոր Միքայելյանը չէր կարող որևէ առնչություն ունենալ սուլթանի՝ մզկիթից վերադարձի պահին կառք-ռումբի պայթեցման ծրագրի հետ, քանի որ նա ծրագրում էր «Նժույգի գործ»-ը կյանքի կոչել Մեծ մարդասպանի աղոթքի գնալու պահին: Հետևաբար, սուլթանի՝ մզկիթից դուրս գալու և նրա կառքի՝ մզկիթի բակի դուռը հասնելու ժամանակի ճշգրտումը Քրիստափորի համար որևէ նշանակություն չուներ: Դրան հակառակ, նրա համար էական էր սուլթանի՝ պալատից մինչև մզկիթի բակի դուռ ընկած տարածքն անցնելու ժամանակի ճշտումը:

Երկրորդ, Ռուբինան չէր կարող Քրիստափորի հետ Կ. Պոլսում եղած ժամանակ 12 անգամ, իսկ 1905 թ. հունիսին Կ. Պոլիս վերադառնալուց հետո՝ 10 անգամ անձամբ ներկա լինել սելամլըքի արարողություններին, ինչպես պնդվում էր վերոնշյալ նյութերում: Այդ արարողությունները տեղի էին ունենում շաբաթը մեկ անգամ: Հետևաբար, առաջին դեպքում նա Կ. Պոլսում պետք է մնար շուրջ երեք, երկրորդ դեպքում՝ երկու և կես ամիս: Մինչդեռ փաստերը վկայում են, որ նա առաջին դեպքում Կ. Պոլսում մնացել է լավագույն դեպքում երկու ամսից քիչ ավելի, իսկ երկրորդ դեպքում՝ մոտ մեկ և կես ամիս: Իրականությանն ավելի մոտ է այն, որ Ռուբինան, ընդհանուր առմամբ, 10-12 անգամ է ներկա գտնվել սելամլըքի արարողություններին: Չնայած նաև չի բացառվում, որ ուշադրություն չհրավիրելու, կասկածի տեղիք չտալու և այլ պատճառներով սելամլըքի արարողություններին նրա ներկայությունն իրականում ավելի քիչ է եղել: Մինչդեռ, ըստ Ցուցականի տեղեկագրի, Ցուցական մարմնի այլ անդամներ և օժանդակ գործիչներ ամիսներ շարունակ պարբերաբար ներկա են եղել այդ արարողությանը՝ կատարելով անհրաժեշտ դիտարկումներ ու հաշվարկներ:

Առաջին շրջանում Ցուցական մարմնին գլխավորապես հետաքրքրել է սուլթանի՝ աղոթքի գնալու, իսկ վերջին շրջանում՝ մզկիթից վերադառնալու պահը: Բնականաբար, երկու դեպքում էլ արձանագրվել են ժամանակի միմյանցից տարբերվող ցուցանիշներ: Դրանցից մեկը՝ 1 րոպե 53 վայրկյանը, որն արձանագրում էր սուլթանի՝ մզկիթից դուրս գալու և նրա կառքի՝ մզկիթի բակի դուռը հասնելու պահը, հիշատակված է Ցուցականի տեղեկագրում: Մինչդեռ առաջին ամիսներին ֆիքսված ժամանակի մասին նույն տեղեկագիրը լռում է: Ձեռնարկի մանրամասներին քաջատեղյակ Է. Ժորիսն, անշուշտ, գիտեր թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքերում արձանագրված ցուցանիշները: Ինչ-ինչ նկատառումներով նա Եղեռնական ատյանից թաքցրել է դժոխային մեքենայի ժամացույցի՝ 1 րոպե 48 վայրկյանի վրա լարված լինելու փաստը, ինչն այդ պահին արդեն էական նշանակություն չուներ, և իր ցուցմունքներում հիշատակում է 1 րոպե 42 վայրկյանը: Առնչվո՞ւմ էր արդյոք վերջին տվյալը «Նժույգի գործ»-ի հետ, թե՞ Է. Ժորիսի երևակայության արգասիքն էր: Կարծում ենք, 1 րոպե 42 վայրկյանը օդից վերցրած թիվ չէ: Դա Քրիստափորի նահատակվելուց առաջ Ցուցականի կողմից բազմիցս արձանագրված այն ժամանակն էր, որի ընթացքում սուլթանի կառքն անցնում էր պալատից մինչև մզկիթի բակի դուռն ընկած տարածքը:

Ի դեպ, դա պատասխան է տալիս նաև այն հարցին, թե ինչպես է առաջացել Թահսին փաշայի վերոբերյալ վկայությունը, որը, ճշմարտանման լինելով հանդերձ, հակասական է և ինչ-որ առումով իմաստազուրկ: Վերջին հանգամանքի վրա առայսօր ուշադրություն չի դարձվել: Ի տարբերություն Եղեռնական ատյանի, Թահսին փաշան թերևս հասկացել է, որ 1 րոպե 42 վայրկյանը չի առնչվում սուլթանի՝ մզկիթից դուրս գալու պահի հետ, այլ արձանագրում է պալատից մինչև մզկիթի բակ հասնելու ժամանակը: Բայց, ծանոթ չլինելով «Նժույգի գործ»-ի նրբերանգներին և Ցուցականի ծրագրերում կատարված կտրուկ փոփոխություններին, նա չի ընկալել, թե սուլթանի՝ մզկիթից դուրս գալու պահին ռումբ-կառքի պայթեցման հետ ինչ կապ կարող է ունենալ պալատից մինչև մզկիթի բակի դուռ սուլթանի անցնելիք ժամանակի տևողությունը չափելը: Փորձելով միմյանց շաղկապել իրար հետ ընդհանուր ոչինչ չունեցող այդ երկու փաստերը՝ Թահսին փաշան գլխիվայր շրջել է «պալատից

մինչև մզկիթի բակ եղած տարածությունը» արտահայտությունը, ինչի արդյունքում ստացվել է «...Մզկիթի բակեն մինչև պալատ եղած տարածությունը» ձևակերպումը: Չնայած վերջին դեպքում նույնպես չենք ստանում այն հարցի պատասխանը, թե Ցուցական մարմնին ինչո՞ւ էր պետք այդ տարածությունն անցնելու ժամանակի ճշտումը և ի՞նչ կապ կարող էր այն ունենալ ռումբ-կառքի հետ, որը պայթելու էր մինչ այդ:

Շաբաթներ է տևում նաև ռումբ-կառքի պատրաստումը: Միայն դժոխային մեքենայի համար անհրաժեշտ երկաթե սնդուկը պատրաստելու և այն կառապանի նստարան ծառայող փայտե սնդուկի մեջ տեղադրելու համար պահանջվում է ավելի քան երեք շաբաթ: Դա թելադրված էր երկու հանգամանքներով:

Նախ, երկաթե սնդուկի պատրաստումը պատվիրված էր մի հույն երկաթագործի, որին անծանոթ պետք է մնար, թե ինչ նպատակի էր ծառայելու այն: Հետևաբար, հնարավոր չէր նրան ցույց տալ կառքը՝ արկղի ստույգ չափերն անձամբ վերցնելու համար: Հույնը հավատացած էր, որ իր պատրաստած արկղը դրամարկղ է ծառայելու մի քմահաճ անգլիացու համար և տեղադրվելու է վերջինիս տան ճիշտ նույն ձև ունեցող անկյունում: Չտիրապետելով երկաթագործի արհեստի նրբություններին՝ Ցուցականի անդամները չէին կարողանում ստույգ չափումներ կատարել: Այդ պատճառով արկղը մերթ մեծ էր ստացվում, մերթ փոքր, և հարկ էր լինում նորից ու նորից պատրաստել այն:

Երկրորդ հանգամանքն այն էր, որ կառապանի նստարանի պես երկաթե սնդուկն էլ հատած բուրգի տեսք պետք է ունենար: Հետևաբար, հնարավոր չէր այն ամբողջական պատրաստել և միանգամից զետեղել կառապանի նստարանի տակ: Այն պատրաստվում է վեց առանձին կտորներից, որոնք միմյանց էին միացվելու երկաթե անկյունների միջոցով՝ պտուտակների օգնությամբ:

Նախապես ավելի քան 100 կետերից ծակելով կառապանի փայտե նստարանը՝ հաջողվում է շուրջ չորս օրվա լարված աշխատանքի արդյունքում դրա ներսում ամբողջացնել երկաթե սնդուկը՝ այդ նպատակով օգտագործելով շուրջ 12 հոխա կշռով պտուտակներ ու պնդօղակներ: «Հետաքրքրասեր հայացքներից» խուսափելու համար՝ այդ ամենը կատարվում է Կ. Պոլսից դուրս՝ զբոսաշրջիկի քողի տակ: Դրանից հետո երկաթե սնդուկի ներսի կողմից դրվում են երկաթե բարակ թիթեղներ և պատերի երկարությամբ իրար կողքի խիտ շարվում 1 սմ հաստություն, 2 սմ լայնություն և սնդուկի բարձրությունն ունեցող երկաթե ձողեր: Վերջիններիս տեղադրումը միայն սնդուկի պատերին ամրություն տալու նպատակ չուներ: Դրանք ունեին իրարից 2 սմ հեռավորության վրա խարտվածքներ, և ռումբի պայթյունից հետո տալու էին յուրաքանչյուրը 4 խորանարդ սանտիմետրի չափով 1500-ի հասնող երկաթի բեկորներ[1]:

Երկաթե սնդուկի տեղադրումից հետո մնացած աշխատանքներն արագ են ընթանում: 1905 թ. հուլիսի 18-ին՝ երեքշաբթի օրը, Ցուցականի անդամներն ու Կ. Պոլսում եղած օժանդակ գործիչները, երկու խմբի բաժանված, կյանքի էին կոչում Ելդըզի ռումբը: Սաֆոն և Ռուբինան տանը պատրաստում էին մեքենան բռնկեցնող սարքը: Քամիչի նման ծակծկված թիթեղյա արկղի մեջ շարք-շարք դասավորվում են 380 հրապատիճներ, իսկ դրանց կենտրոնում դրվում են երկու զույգ էլեկտրական հրապատիճ բռնկեցնողներ: Վերջիններիս հաղորդիչ ծայրերը դուրս են հանվում արկղի կափարիչի երկու անցքերից: Բացի կափարիչից, թիթեղյա արկղի մյուս կողմերի ծակծկված լինելը պետք է դյուրացներ մելինիտի բռնկումը: Նույն ժամանակ Թորգոմը և օժանդակ գործիչներ Զարեհը, Մկրտիչն ու Երվանդը կառատանը բարակ պղնձաթել մաղերով մաղում էին մելինիտը և այն պինդ լցնում արդեն տեղադրված երկաթե սնդուկի մեջ՝ վերջինիս կենտրոնում նախապես փայտե կաղապար դնելով բռնկեցնող սարքի համար: Դժոխային մեքենայի ամբողջացումն իրականացվում է հուլիսի 19-ին՝ պայթյունից երկու օր առաջ: Սաֆոն և Աշոտ Եղիկյանը մեծ զգուշավորությամբ բռնկեցնող սարքը տեղավորում են մելինիտով լեցուն երկաթե սնդուկի մեջ[2]:

---

[1] *Տե՛ս Նիւթեր..., Դ. հատոր, էջ 213-214:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 214, 216:*

Ի դեպ, Եղեռնական ատյանի նյութերում և պատմագիտական գրականության մեջ խիստ հակասական մեկնաբանությունների տեղիք է տվել նաև դժոխային մեքենայի պարունակած մելինիտի քանակության հարցը: Մի կողմ ենք թողնում ժամանակի մամուլի էջերում դեպքերի թարմ արձագանքի արդյունքում հայտնված միանգամայն կասկածահարույց թվերը, որոնք «Նժույգի գործ»-ի ձախողման իրական պատճառների բացահայտմանը զուգընթաց ինքնաբերաբար բացատրելի կդառնան: Անդրադառնանք այդ հարցում թուրքական Եղեռնական ատյանի նյութերի և Ցուցական մարմնի տեղեկագրի մատուցած փաստական տվյալների էական տարբերությանը: Եղեռնական ատյանն այս հարցում ևս գնացել է Է. Ժորիսի հաղորդած ճշմարտանման, բայց ոչ ճիշտ, փաստերի հետքերով: Է. Ժորիսը վկայել է, որ դժոխային մեքենան ստեղծելու համար օգտագործվել է իր տանը պահվող 140 կգ մելինիտը, որը ձեռնարկին նախորդած օրերին պայուսակներով փոխադրվել է կառատուն: Ըստ նրա՝ երկաթե սնդուկում հնարավոր է եղել զետեղել 80 կգ ոչ ավել մելինիտ[1]: Ելնելով այս փաստից՝ Եղեռնական ատյանը, բնականաբար, իր կարևորագույն խնդիրներից մեկը համարել է մնացած շուրջ 60 կգ մելինիտի հայտնաբերումը: Հետաքննչական գործողությունների արդյունքում հաջողվել է 32 կգ մելինիտ և այլ նյութեր հայտնաբերել Կ. Պոլսի ավստրիական հիվանդանոցի տարածքում: Հաջողվել է որոշ փաստեր հավաքել նաև ավելի քան 30 կգ այլ պայթուցիկ նյութերի ոչնչացման օգտին: Դա Եղեռնական ատյանին թույլ է տվել հանգել իր համար ցանկալի և հետագա գլխացավանքներից ազատող հետևյալ եզրակացությանը. «Հետեւաբար պայթումին ժամանակ գործածուած 80 քիլօ մելինիթին վրայ եթե աւելացնենք նաեւ հորէն հանուած ու հիւանդանոցէն գտնուած 62 քիլօ մելինիթը, կը հաստատուի թէ անիծապարտ նպատակով Ժորիսի տունը պահուած 140 քիլօ մելինիթը ամբողջութեամբ մէջտեղ հանուած է, հետեւաբար այս եղեռնական նպատակներով՝ յիշեալ ամբաստանեալներուն կողմէ ուրիշ մելինիթ չբերուած և ուրիշ տեղ պահուած չըլլալով, ասկէ գոյանալիք հաւանական չարիքին առաջքը առնուած է շնորհիւ Վեհ. կայսեր և հարցաքննութիւններն ու խուզարկութիւնները այսպիսի դրական և ճշմարիտ արդիւնքի մը յանգեցան»[2]:

Նման հետևությունն առաջին հայացքից կասկածի տակ է դնում Ցուցականի տեղեկագրում բազմիցս կրկնվող այն փաստի հավաստիությունը, թե դժոխային մեքենան պարունակել է 124 կգ մելինիտ[3]: Ավելին, երկու թվերի տարբերությունը, իրոք, շոշափելի է և կարող է ենթադրությունների տեղիք տալ, թե դժոխային մեքենայում 124-ի փոխարեն 80 կգ մելինիտ զետեղելն է եղել կառք-ռումբի անարդյունավետության հիմնական պատճառներից մեկը: Բայց Ցուցականի տեղեկագիրը փարատում է այդ կասկածները: Համաձայն վերջինիս՝ «Նժույգի գործ»-ի համար Կ. Պոլիս է ներկրվել ոչ թե 140, այլ՝ 204 կգ մելինիտ[4]: Այս դեպքում արդեն քննության չի դիմանում Եղեռնական ատյանի այն պնդումը, թե ամբաստանյալները, բացի Է. Ժորիսի տանը պահած 140 կգ մելինիտից, այլ տեղ մելինիտ չեն պահել: Նրա հիմնական տեղեկատու Է. Ժորիսը կարող էր նաև տեղյակ չլինել, թե իրականում որքան մելինիտ էր ներկրվել Կ. Պոլիս: Պարզ տրամաբանությունն էլ հուշում է, որ Կ. Պոլիս ներկրված ամբողջ մելինիտը մի տեղում չէր պահվելու: Մյուս կողմից, տեղյակ չլինելով, որ դժոխային մեքենան ավարտուն տեսք է ստացել ձեռնարկից ընդամենը 2-3 օր առաջ, Եղեռնական ատյանն իր հերթին չի կարողացել խորանալ փաստերի մեջ ու պարզել, որ ավստրիական հիվանդանոցում գտնված 32 կգ մելինիտը և այլ նյութեր այնտեղ հայտնվել են Ելդըզի պայթյունից ավելի քան 20 օր առաջ, այն է՝ դժոխային մեքենայի պատրաստումից շուրջ երեք շաբաթ առաջ, երբ դեռ պարզ չէր, թե որքան մելինիտ է օգտագործվելու կառք-ռումբի համար: Իբրև եզրահանգում՝ կարող ենք միանշանակ պնդել, որ կառք-ռումբի համար իրականում օգտագործվել է Կ. Պոլիս ներկրված 204 կգ մելինիտի մեծ մասը՝ 124

[1] *Տե՛ս Եըլտըզի մահափորձը..., էջ 47-48, 52:*
[2] *Նույն տեղում, էջ 87-88:*
[3] *Տե՛ս Նիւթեր..., Դ. հատոր, էջ 208, 211, 218-219:*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 202:*

կգ-ի չափով: Ելդըզի պայթյունից հետո անցկացված հետաքննության արդյունքում իշխանություններին հաջողվել է գտնել մնացած 80 կգ մելինիտի միայն մի մասը՝ մոտ 62 կգ: Իսկ ՀՅԴ Կ. Պոլսի կառույցի տնօրինության ներքո մնացած շուրջ 20 կգ մելինիտի նմուշները հետագայում դեռ պետք էին գալու ՀՅԴ-ին՝ «Նժույգի գործ»-ի ձախողման պատճառները հետաքննելու ժամանակ: Բայց թե՛ մեկ, թե՛ մյուս խնդիրները մեկ այլ հետազոտության առարկա են:

Այսպիսով, Վիտոշի աղետին հաջորդած ամիսներին ՀՅԴ Կ. Պոլսի Ցուցական մարմնի գործունեության ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրահանգումներին.

ա) Չնայած «Նժույգի գործ»-ի հաջողության նկատմամբ ՀՅԴ գործիչների շրջանում առաջ եկած որոշակի թերահավատությանը, Ցուցական մարմնի Կ. Պոլսում գտնվող անդամների և օժանդակ գործիչների վճռական դիրքորոշման շնորհիվ է, որ Դաշնակցության Խորհուրդը վճռում է ավարտին հասցնել սկսած գործը:

բ) Դրանով հանդերձ, Վիտոշի աղետից հետո «Նժույգի գործ»-ում ստեղծված նոր իրավիճակը (թուրքական կողմի առավել զգուշավոր և աչալուրջ դառնալը, սուլթանի անվտանգության ամրապնդմանն ուղղված լրացուցիչ քայլերը, ռումբերի ու պայթուցիկների գծով ռուս մասնագետների հետ Ցուցական մարմնի ներկայացուցչի ունեցած խորհրդատվական հանդիպումները, Բուլղարիայում կատարված նոր փորձարկումները և այլն) Ցուցական մարմնին պարտադրում են հրաժարվել նախնական ծրագրերից և որդեգրել էապես նոր մոտեցումներ թե՛ վճռական հարվածի ձևի, թե՛ այն հասցնելու պահի ընտրության հարցերում:

գ) Ելդըզի պայթյունի նախօրեին Ցուցական մարմնի համալրված կազմն ունեցել է միասնական դիրքորոշում վճռական հարվածի թե՛ ձևի, թե՛ այն հասցնելու պահի ընտրության հարցերում: Այլապես, համաձայն Ցուցական մարմնի «Փորձնական կանոնագրի» 13-րդ հոդվածի, այդ հարվածը պարզապես չէր լինելու: Այս առումով համոզիչ չեն այն պնդումները, որոնք ձեռնարկի ձախողումից հետո հնչեցվել են Ցուցական մարմնի անդամ Ռուբինա Արեշյանի կողմից նախ՝ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում, ապա՝ տասնամյակներ անց իր գրած հուշ-նամակում:

Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ-СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.). В статье всесторонне анализируется деятельность Константинопольского Указывающего органа АРФ Дашнакцутюн в период, последующий за трагедией у подножия горы Витош (март-середина июля 1905 г.), которая была направлена на завершение подготовительных работ по осуществлению акта возмездия в отношении Кровавого султана Абдул Гамида II («Дело коня»). На основе различных источников, в том числе опубликованных впервые за последние десятилетия документов Бостонского центрального архива АРФ Дашнакцутюн, подробно представлен ряд эпизодов и фактов деятельности Константинопольского Ответственного Указывающего органа АРФ Дашнакцутюн, которые до сих пор по разным причинам практически оставались вне поля зрения историков. Сопоставляя и анализируя зачастую противоречивый или взаимоисключающий фактический материал, в статье даются исчерпывающие ответы на ряд спорных по сей день вопросов. В частности, представлены те субъективные и объективные обстоятельства, заставившие Указывающий орган отказаться после трагической смерти их руководителя Христофора Микаэляна от начального плана и на последнем этапе по подготовке операции «Дело коня» избрать новую тактику для нанесения решающего удара. В статье делаются также важные уточнения относительно некоторых спорных для историков и противоречивых вопросов, связанных с деятельностью Указывающего органа АРФ Дашнакцутюн и с «Делом коня».

Ключевые слова: Ответственный Указывающий орган АРФ Дашнакцутюн, Совет АРФ Дашнакцутюн, «Дело коня», пятничный селамлык, ручная бомба, бомба-карета, мелинит, отчет Указывающего органа, Трибунал, рассматривающий судебное дело по совершению акта возмездия.

Hovik Grigoryan, THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905). The activities of the Indicative Organization of ARF Dashnakstutyun of Constantinople in the months after the Vitosh disaster (from March to mid-July, 1905), aimed towards finalization of the organization of assassination of the Bloody Sultan Abdul Hamid II ("The Case of Nzhuyk"), are comprehensively analyzed in the current publication.

A number of episodes from the activities of the Responsible-Indicative Organization of ARF Dashnakstutyun of Constantinople (almost left out of the historians' sight due to various reasons in the past) are presented in detail, based on various sources, including documents from ARF Dashnakstutyun's Boston Central Archive published for the first time in recent decades.

Based on combined analysis of often contradicting and mutually excluding factual materials, the current publication gives exhaustive answers to several questions which are yet debatable. Particularly, the current publication presents the objective and subjective factors that made the Indicative Organization abandon its preliminary plan after the martyrdom of its leader Kristapor Mikayelyan and choose new tactics of striking the decisive blow during the last stages of the preparation of "The Case of Nzhuyk".

The current publication also makes important adjustments on the activities of the Indicative Organization of ARF Dashnakstutyun, as well as several controversial and contradictory issues on "The Case of Nzhuyk" for historians.

Keywords: Indicative Organization of ARF-Dashnakstutyun, the Council of ARF Dashnakstutyun, "The Case of Nzhuyk", Friday Selamlik, handgrenade, carriage-grenade, melinit, bulletin of Indicative Organization, "Yeghernakan" trial court.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200